

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

Գէորգեան ձեմարանի մեծ դէպքը

Հ. Յ. Դ. Կեդր. Դիւանում մնացել է Բագրատ վարդ. Թաւափալեանի ձեմարանը արտագրւած հետեւեալ երգը, որ յօրինել ու երգում էր 1894 թ. նոյեմբերին Էջմիածնի Գէորգեան ձեմարանում պատահած «Մեծ Դէպք» անունով յայտնի աշակերտական խռովութեան առթիւ:

Մինչեւ հրիմեան Կաթուղիկոսի Էջմիածին հասնելը ձեմարանում, ինչպէս եւ ամբողջ վանքում, տիրող էին մշակական ուղղութեան պատկանողները, եւ աշակերտութեան մեծ մասը նոյնպէս մշակական էր: Երբիմեանի գալով, թէ՛ ձեմարանում եւ թէ՛ միաբանութեան մէջ սկսւեց մաքրագործում. մշակականները հեռացում էին եւ նրանց տեղ նշանակում էին պահպանողականներ: Այս հոգի վրա 1894 թ. նոյեմբ. 24-ին ծագեց աշակերտական մի մեծ խռովութիւն. Կաթուղիկոսի կարգադրութեամբ, ոստիկանութիւն մտցւեց ձեմարան եւ 83 աշակերտներ բանտարկւեցին ու վտարւեցին:

Կատարածը այնքան անարդար էր ու դաժան, որ ընդհանուր վրդովում առաջ բերեց հասարակութեան լայն խաւերում եւ խստորէն դատապարտւեց մամուլի կողմից: Այդ տմարդի դէպքի արձագանգներից մէկն է եւ յիշեալ երգը, որ երկար ժամանակ երգւում էր ձեմարանում եւ դուրսը, հասարակութեան մէջ: Երգը յօրինողը Սահակ վարդ. Ամատունին է՝ «Բառ ու Բան» բառարանի հեղինակը, որ հեզմանքով, բայց հարազատորէն ներկայացրել է ամբողջ դէպքն ու դերակատարներին: Երգը երգւում էր «Չայնը հնչեց էրգրումի Հայոց լեռներից» երգի եղանակով:

ԽՄԲ.



*ձեմարանի կուռի ձայնը հնչեց հինգշաբթի, *)
 Կուռողքն էին ութսուներեք անպիտան հողի:
 Յառաջ տեց Կարամուրդէն մեր տեսչի կրծքին,
 Ու շարտեց պինդ խուլի ու թուր նրա՛ կարճ միրքին:*

*) 24 նոյեմբեր, 1894 թ.:

Եննա բոլորն իւմբող տւին թեւ ու թիկունքին,
 Մի քանիսն էլ ոտով տւին նրա փաչէքին:
 Աստուածածնայ պատկերի տակ *) Դանադէոզեանին
 Վրա հասան, վե՛ր կոխեցին մեր էս հայւլանին:
 Ծւի՛կ – ծւիկ պատուեցին իբրեւ գառան փոստ
 Նրա սերթուկ, պալտո՛, չէմշակ ու տրոստ:
 էս որ տեսան Սէթ, Յոհանէս, Քեարա՛մ, Բերբերեան,
 Մորթին առած շա՛ն պէս թռան, ընկան վեհարան:
 էս որ տեսան Եղնիկ, Յուսիկ, Տիրա՛յր արեղէք,
 Առան – փախան վեղա՛ր, միրուք, իբրեւ երեսէք:
 էս որ տեսաւ աստուածարան մեր խե՛ղճ կարապետ,
 Ասեց՝ Ա՛ստուած, ո՞ր ծակ մտնեմ ես էլ սրանց հետ:
 Իսկ տիրացու սիրուն Մուշեղ, թթւած Ռափայէլ,
 Ծլո՛ւնկ – ծլունկ ծըլկըվեցին իբրեւ սոված դէլ:
 Տէր – Միրաքեան երբ էս տեսաւ, էլ չըիմացաւ,
 Աղլուին աչքին բռնեց – դնաց, կուից հեռացաւ:
 էս թունդ կուբի փիս ժամանակ մնացին անմխաս
 Գէորգ, Աշոտ եւ Անարիաս, իբրեւ սիրուն հարս:
 Եննա էկան Ներսէս, Սարգիս, Վահան Վարդապետ,
 Կոբ՛ւ տւին, կոբ՛ւ առան էս լրբերի հետ:
 Եննա վանքից վերցրած եկան փէտ, վարոց, խանչալ,
 Մտան ըստեղ թւանքչիքով շատ քոռ ու քաչալ:
 Էնպէ՛ս տւին տուր ու տմբոց մեր էս էշերին,
 Որ ասեցին՝ «հէրն անիծեմ ըստեղ մընողին, ըստեղ մտնողին»:
 Փոսանտ գցեց մեր Հայրիկն էլ, քաչեց վեհարան, **)
 Գող շան նման գոռսել տւեց դարբազի դռան:
 Հարա՛յ մանդաթն ընկաւ աշխարհ, էկան – թոփ էղան
 Մէր ու տղայ, հարս ու աղջիկ, բոլոր Միարան:
 Քիթ ու պոռնկ արին լուիկ էս շա՛ն թուլէքը
 Փախան – մտան ձեմարանի նեղ – նեղ օտէքը:
 Պրիստաւով եննա հանեց, անչոր ու անճաշ,
 Գեղի մէջը տութսաղ էրկօր ու մի ճաշ: ***))

*) Աստուածածնի պատկերը՝ ձեմարանի վերին յարկում, միջանցքի արեւելեան գլուխը: Նրա առջեւ առաւօտ ու երեկոյ աշակերտները աղօթք էին անում:

**) 27 նոյեմբեր, կիրակի:

***)) 27 - 29 նոյեմբեր, կիրակի – երեքշաբթի: Երկու օրւայ բանտարկւած աշակերտներին միայն մի ճաշ տւին:

Դէ խնդացիր, քաջա՛լ Կոստօ, դո՛ւրս եկ զո ծակից, *)
 Մեզ էլ, զեզ էլ աղատեցիր էս շա՛ն տղէքից :
 էս տաղի մէջ հէջ սուտ չկայ, ասեցինք դուզը,
 էս կուէն էլ հէնց ըստեղ էր սէՖիլ Թոփուզը :
 Փառաւորի մեր Հայրիկն էլ խորէն խրիմեանով,
 էրկու շաթրով, ինն նոքարով, երեք աշպազով, սարկաւազներով :

*
**

Վերջին այս «երկու շաթրի, ինն նոքարի եւ երեք աշպազի» մասին էլ երգում էր հետեւեալ երգը, «Ո՛հ, ի՛նչ քաղցր բան»-ի եղանակով :

Հաջի Կարապետ,	Լաքէյ Կարապետ,
Սարկաւազ Վահան,	Թէյարար Վիմոն,
Սարկաւազ Ռափայէլ	Աւելածու Օհան
Եւ շաթիր Վահան :	Եւ տնտես Սիմոն :
Շաթիր Կարապետ,	Խոհարար Մարգար,
Դաղբաշի Սեփան,	Մուքուրիկ **) Թաթոս,
Լաքէյ Մկրտիչ	Խոհարար Սարգիս,
Եւ ջրկիր Վարդան :	Բաղշաշի Թաթոս :

Երգերի մէջ յիշած անունները հետեւեալներն են .

Կարամուրզի .— Երաժշտագէտ Գր. Կարա Մուրզա, որ ուսուցիչ էր ձեմարանում եւ դէպքից յետոյ արձակւեց պաշտօնից : Հայրիկն, առհասարակ, հէնց առաջին օրից չսիրեց նրան : Ինչպէս պատմում է Աւ. Ահարոնեանը «Հայրենիք» ամսագրում (1927 թ. թիւ 2), «ճամբու դրեց ձեմարանի երաժշտապետ Կարա - Մուրզային, որովհետեւ եռաձայն ու քառաձայն երգեցողութիւն չէր տանում» : Մաղրելով աւսում էր . «Սա գիւղական տղաքները կը բերեն Մայր Աթոռ, մաճ, արօր, երկրագործութիւն թողած՝ մուզիկ կը չալեն» :

Դանազեճգեան .— Խրիմցի, վերակացու էր ձեմարանում : Յետոյ ձեռնադրւեց վարդապետ Մուշէ վարդ . Եգաչեան անունով, եւ երկար տարիներ վարեց Նօր - Նախիջեանի թեմի յաջորդութիւնը : Ունի գրական աշխատութիւններ, մեծ մասամբ թարգմանութիւններ Չեխովից, Կորոլենկոյից եւ ուրս այլ հեղինակներից : Աշխատակցում էր գլխաւորապէս «Լուծայ» հանդէսին :

*) 24 նոյեմ. - 4 դեկտեմ. փակած մնաց տանը. չէր համարձակում դուրս գալ :

**) Մուխրիկի — ամամ լաքազ :

Սէք .— Սէթ Յարութիւնեան , հայոց լեզուի ուսուցիչ ձեմարանում :

Յոնանէս .— Բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեան :

Բեարամ .— Նիկողայոս Բեարամեան , պատմութեան ուսուցիչ :

Բերբերեան .— Մինաս Բերբերեան , պահպանողական ուղղութեան պատկանող հասարակական դործիչ , գրական քննադատ եւ հրատարակադիր : Հայաստանի Հանրապետութեան անդրամիկ պետական վերահսկիչը :

Եզնիկ .— Հետադային վարդապետ :

Յուսիկ .— Յուսիկ եպ . Ջոհրաբեան , Ռուսանահայ թեմի այժմայ առաջնորդը :

Տիրայր .— Տիրայր եպ . , Ամերիկայի նախկին առաջնորդը :

Կարապետ .— Կարապետ վարդ . Տէր - Մկրտչեան , յետոյ՝ եպիսկոպոս : Դէպքի ժամանակ տեսչի օգնական էր : Վերջը եղաւ ձեմարանի տեսուչ , ապա Ատրպատականի ու Շամախու թեմերի առաջնորդ : Յայտնի գիտնական , ասուածարան :

Մուշեղ , Ռափաէլյ .— Սարկաւազներ :

Տէր - Միրաբեան .— Ծանօթ մանկավարժ Յ . Տէր - Միրաբեան , որ նոյնպէս շուտով հեռացեց ձեմարանից , իբրեւ մշակական :

Գէորգ , Աշոտ եւ Անդրիաս .— Վերակացուներ :

Վահան վարդապետ .— Վահան վ . Տէր - Գրիգորեան : Նախկին մշակական , աշխատակցում էր «Մշակ»-ին Կապիլացի կեղծանունով , ապա դարձաւ պահպանողական եւ Խրիմեանի կողմնակից : Հետագային կառավարութեան կողմից աքսորեց Նոր - Նախիջեանի Սուրբ Խաչ վանքը եւ երկար ժամանակ եղաւ նոյն վանքի վանահայր :

Կոստո .— Յայտնի գիտնական - հայագէտ Կարապետ Կոստանեան , ձեմարանի տեսուչ :

Հաջի Կարապետ .— Ջրբաշխեան , Հայրիկի մերձաւորը :

Սարկաւազ Վահան .— Հետագային Կորիւն վարդապետ , Գանձակի առաջնորդ , աքսորեց Սիրիւր Հ . Յ . Դաշնակցութեան գործով :

Շաքիր Կարապետ .— Ագրիպասեան , Գոլոչեանի ընկեր Ագրիպասեանի եղբայրը , Հայրիկի մերձաւորներից մէկը :

Միւսները՝ վանքի ու վեհարանի ծառայողներ ու սպասաւորներ , մեծ մասամբ վանեցի :

